ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ՀԵՐԹԱԿԱՆ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մարտի 2-ին ժամը 12:25-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստը, որին մասնակցում է Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Փարաքար համայնքի ավագանու հերթական վարում է համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստը արձանագրում է աշխատակազմի քարտուղար Մ.Քեյանը: Նախագահողը՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց քննարկել դրանք ու հաստատել օրակարգը:

Օրակարգի որոշման նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի հերթական նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր - 8 նախագիծը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 15-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 90 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Նորակերտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի թիվ 7/2 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին

7. Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նիստի օր սահմանելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու, համայնքային սեփականության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության, հողօգտագործման և ընդհանուր բաժնի պետ Հակոբ Միքաելյանը .

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր - 8 նախագիծը հաստատելու որոշման նախագիծը, որը իրենից ներկայացնում է խոշորացված համայնքի գլխավոր հատակագիծը
Հարցեր - Գոռ Սարիբեկյան -նախագիծը ներառում է բոլոր ինը բնակավայրերը, չնայած նշվեց նաև Ոսկեհատ համայնք, որի մասով հաստատում չի լինում:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության, հողօգտագործման և ընդհանուր բաժնի պետ Հակոբ Միքաելյանը, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

Հարց –Գոռ Սարիբեկյան , փոփոխությունն ինչի համար է կատարվում

Հակոբ Միքաելյան - քանի որ ՀՀ հողային օրենսգրքում փոփոխությունը է կատարվել և հողումը պետք է լինի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով, որի հիման վրա կասեցրել են որոշման կատարման ընթացքը:

Այլ հարցեր չեղան զեկուցողին:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության, հողօգտագործման և ընդհանուր բաժնի պետ Հակոբ Միքաելյանը, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 15-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին , զեկուցողը նշեց որ փոփոխությունը վերաբերում է նույն օրենքի հոմանը:

Հարցեր չեղան
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի **3-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության, հողօգտագործման և ընդհանուր բաժնի պետ Հակոբ Միքաելյանը, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին , զեկուցողը նշեց որ փոփոխությունը վերաբերում է նույն օրենքի հոդմանը:

Հարցեր չեղան
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի **4-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության, հողօգտագործման և ընդհանուր բաժնի պետ Հակոբ Միքաելյանը Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 90 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, զեկուղոցը նշեց որ այս փոփոխությունը ևս վերաբերում է Հողային օրենսգրքի փոփոխությանը
Հարցեր չեղան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի **5-րդ հարցի առթիվ՝** զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը, ներկայացրեց
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Նորակերտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Նորակերտի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի թիվ 7/2 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը:
Հարցեր չեղան

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ավագանու անդամ, համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը , ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին որոշման նախագիծը, առաջարկեց Կարապետ Արթենյանին նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ:

Գոռ Սարիբեկյանը առաջարկեց Կարապետ Արթենյանին օգտվել իր իրավունքներից, հայտարարել ավագանու մանդատը վայր դնելու մասին և հաղորդում ներկայացնել համայնքի ղեկավարին:

Կարապետ Արթենյան – շնորհակալություն հայտնեց վստահության համար և հայտնեց պատրաստակամություն ամեն ինչ անել համայնքի բարգավաճման համար:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը ներկայացրեց Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նիստի օր սահմանելու մասին հարցը և առաջարկեց հաջորդ նիստն անցկացնել ս/թ ապրիլի 6-ին,
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ՔՀՆԸ բաժնի պետ Հակոբ Միքաելյանը,այն է **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու, համայնքային սեփականության հանդիսացող 04-065-0064-0056 կադաստրային ծածկագրով, 0.002 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասին նպատակային նշանակությունը փոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառական նշանակությունը՝ էներգետիկայի: Հողատարածքի գործառնական նշանակությունը փոփոխվում է, որպեսզի տեղադրվի տրանսֆորմատորային ենթակայան նորակառույց թաղամասը լուսավորություն անցկացնելու համար:**

Հարցեր զեկուցողին

Գոռ Սարիբեկյան – տարածքը վարձակալությամբ է տրամադրվում
Պատասխանվեց որ այդ մասը կնշվի պայմանագրի կնքման ժամանակ , հավանաբար կտրամադրվի անհատույց,
Արաքս Վարդանյան – առաջարկեց հարցի քննարկումը հետաձգել լրացուցիչ ուսումնասիրելու համար

Հ.Միքաելյան –ենթակայանը տեղադրվելու է Մերձավան գյուղի Երիտասարդության փողոցում, դիմումի քննարկումը երկարաձգվել է փաստաթղթերի հետ կապված խնդիրների պատճառով, մինչև միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, Նշվեց նաև որ օր առաջ անհրաժեշտ է էլեկտրաֆիկացնել թաղամասը, որովհետև դեռ ձմեռ է և ջերմության ապահովման կարիք էլ կա:
Փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված:

Ավագանու անդամներ՝

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.ՔԵՅԱՆ